Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

1) մասնակցել Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի նախապատրաստական աշխատանքներին և ներկայացնել անմիջական ղեկավարին.

2) մասնակցել քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների ուսումնասիրությանը և համապատասխան ընթացքի ապահովմանը և ներկայացնել անմիջական ղեկավարին.

3) օժանդակել ՀՀ Գեղարքունիքի մարզի (այսուհետ՝ Մարզ) համայնքների ղեկավարներից ստացված շինարարության թույլտվությունների օրինականության ստուգմանը ընտրանքային կարգով և հաշվառմանը, ներկայացնել անմիջական ղեկավարին.

4) մասնակցել Մարզում իրականացվող հիմնանորոգման աշխատանքների ընթացքի վերահսկմանը և ներկայացնել անմիջական ղեկավարին.

5) օժանդակել Մարզի տարածքում իրականացվող պետական ծրագրերով ավարտական շինարարական աշխատանքների ընդունող հանձնաժողովի աշխատանքներին և ներկայացնել անմիջական ղեկավարին.

6) մասնակցել մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի, մշակութային և սպորտային կազմակերպությունների, առողջապահական, սոցիալական պաշտպանության հաստատությունների շենքերի կառուցման, պահպանման ու շահագործման աշխատանքների ուսումնասիրմանը և ներկայացնել անմիջական ղեկավարին.

7) մասնակցել նախարարություններից, Մարզի համայնքների ղեկավարներից և այլ հաստատություններից ստացված առաջարկությունների քննարկմանը և ներկայացնել անմիջական ղեկավարին.

8) մասնակցել առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի, գրությունների նախապատրաստմանը և ներկայացնել անմիջական ղեկավարին:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ 6 (վեց) ամիս:

1. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ **139776 (մեկ հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ:**

Փորձագետի պարտականությունները՝

2. բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.
3. սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները.
4. պահպանել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը.
5. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները.
6. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները.

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

1) Բարձրագույն կրթություն.
2) Առանց աշխատանքային ստաժի.
3) ռուսերեն կամ անգլերեն լեզուներին (գերազանց) տիրապետում.
4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում **(դիմումի ձևը կցվում է).**
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր).
- աշխատանքային գրքույկ (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր համապատասխան մարմնից/ներից).
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական, կամ համապատասխան տեղեկանք.

- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.
- անձնագիր կամ նույնականացման քարտ.
- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք.
- ինքնակենսագրություն.
- հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին **(հայտարարության ձևը կցվում է):**

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն.
- հարցազրույց:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են պատճենների հետ միաժամանակ՝ **անձամբ:**
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 26.07.2023թ.

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, 14:00-ից մինչև 15:00-ն:

Աշխատանքի վայրը՝ ՀՀԳեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ քաղաքացիները տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, հեռ.՝ 060650626:

21.07.2023թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի

գլխավոր քարտուղար

Սևակ Խլղթյանին

---------- -ից

դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

դիմողի հասցեն

դիմողի անձնագրի տվյալները,

հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ Ձեզ աշխատանքային պայմանագրով ընդունել ինձ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի

_____

_____

_____

_____

_____

ստորաբաժանման անվանումը

որպես փորձագետ աշխատելու համար:

Հայտնում եմ, որ.

1. Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

_____

(ունեմ, չունեմ)

2. Տիրապետում եմ համակարգչային ծրագրերին (Վինդոուզ, Վորդ, Էքսել, Աքսես և այլն)

_____

3. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ _____

(ճանաչված եմ, ճանաչված չեմ)

4. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով _____

(տառապում եմ, չեմ տառապում)

5. Այլ վճարովի աշխատանք (բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից)

_____

(իրականացնում եմ, չեմ իրականացնում)

6. Անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ _____

(զբաղվում եմ, չեմ զբաղվում)

7. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ խնամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ

_____

(գտնվում եմ, չեմ գտնվում)

8. Ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ.
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ.
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____էջ.
5. Այլ _____ էջ:

Առդիր ----- էջ:

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____ _____

ստորագրություն անուն, ազգանուն

«------»---------- 2023 թ.

Հայտարարության ձև

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

---------- - ի
(անունը, ազգանունը և հայրանունը)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 13-րդ կետի պահանջը՝ հայտնում եմ հետևյալը.

Պաշտոնից ազատվել կամ վերջին մեկ տարվա ընթացքում ծառայությունը դադարեցվել է՝

1. Կարգապահական տույժ կիրառելու պատճառով _____
(այո, ոչ)
2. Օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու պատճառով _____
(այո, ոչ)
3. Օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու պատճառով _____
(այո, ոչ)
4. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու պատճառով _____
(այո, ոչ)
5. ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու պատճառով _____
(այո, ոչ)
6. Ուժի մեջ մտած՝ կայացված մեղադրական դատավճռի պատճառով _____
(այո, ոչ)
7. Երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու պատճառով _____
(այո, ոչ)

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

«------»---------- 2023 թ.

_____
Լրացնողի անուն, ազգանունը, ստորագրություն